


ԽԱՐԽԱԿ

ՉԳՐՈՅՑՎՈՆ
ՅՈՑՊՈՐՈՍՅՅ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՕԳՈՍՏՈՍԻ 13-ին. Թիֆլիս. №33.
ՂԱՏՆՏԵՍՍԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ



Դասախօսք.—Մածունը պէտք է պատրաստել այսպէս,—նախ և առաջ պէտք է կով ունենալ, յետոյ կովը երբ կըծնի—պէտք է կթել, կաթը հարկաւոր է քամել, քամելուց յետոյ պէտք է ամել մաքուր պղնձի մէջ և դնել կրակի վրայ եռացնել. եռացածը մի քիչ պէտք է հովացնել և անմիջապէս ամել կճուճների մէջ. այնուհետև պէտք է մի գդալի շափ մակարդ ամել և երեսը լաւ փակել, եթէ խոնաւ կամ ցուրտ է, նոյնիսկ կարևոր է, որ շուտով փաթաթելի. այնուհետև մի քանի ժամից յետոյ մենք կաթը մածուն դառած կտանանք:

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.



«ԽԱՔԱՔԱԼԱ» Բ Ա Ք Ա Ն Ե Ք Ե Լ Ե Ն Գ Ո Ւ Յ Յ

VI Տարի

ՄԱՔԱԼԱ

VI Տարի

Նրգիծաբանական-սատիրական պատկերագարող շաբաթաթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱՔԱՔ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլիփիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:

Անհրամբես թերթ բոլոր ընթացիկների համար

«ԽԱՔԱՔԱԼԱ» շաբաթին ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆֆիդ ուզի: Հասցէն՝ Тифлисть Музейный пер., редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Նրիցեան

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Նրբե ածխը	1 » 50 կ.
Ածխը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղծ:

Ձրի կարգացողներին պէտք է նկարենք զլիխվայր:



«ԽԱՔԱՔԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑՑԸ

ԳԻՆ ՈՒ ԳԻՍ

1911 09-ՈՍՏՈՍ 30 օր

13

Суббота ԶԱՌԱԹ Ծաղափոկ
Հունիսի 2

Աշխարհքիս վրէն, —ասած է սուփ գրքում, պիտ պիտ փորցուծի՞նք ու փաթերակներ կան. Աստուծ, կօտէ, ձիգ էս զարդերէմէն հեռու պահեսցէ: Էս ի՞նչի համա է ասած:

Շատ բաներու՝ ու միւր հայերու վրէն:

Օսմանլի հուզում ի՞նչ վուր կոնցլիտուցիայի հիւանդութիւնը նընգաւ՝ հայերը փորցանքի ու փորի ցաւի մէջ նընգան. էն չախը միւր Լէօն թէ վուր գրէր՝ էսենց կու գրէր.

—«Հայերը չունքի էն զլիխմէն՝ էս զլուխը, էն վուտեմէն՝ էն ձեռքը մէ զլուխ առաջամարթիկ ին էլէլ, ու չունքի իստորիէքի էջն էլ ասում ին, վուր մինք ինք՝ ինչ վուր ինք, էղու համա էլ միգ պէտք է էւրոպին հասկացնիլ, վուր մինք՝ մինք ինք ու չունքի մինք՝ մինք ինք, մաշ Օսմանլուի կօնցլիտուցիէն վունչ թէ փաթերակ չէ՝ այլ մաթերակ էլ չէ, ու մեզ պէտք է գիշերցերեկ թրքերի էն լաւ-լաւ սղերանց հեղը աշխատիլ» —

Էսինց կու գրէր միւր Լէօն—թէ վուր գրէր.

Հիմի ի՞նչ վուր էն զղբաշի հաւշարին՝ Մամհէզ շահը վիւր է կացի ու Ադէսումը օղուշաղին թողէլ է մէնակ ու էկիլ է էլի իր Թեհրանի կուրը—միւր Լէօն ասում է

«չունքի, կօտէ, մէկը էն՝ վուր կայ ու մէկէլը էն՝ վուր չկայ, կօտէ, ու կուլի ըլի, կօտէ, ու չունքի, կօտէ, էգէբա չելաւ կօտէ, վուր էս թաբաութում փաթերակներ ըլին, կօտէ, մաշ մինք հայերս ինչ պիտ անենք, կօտէ. պտինք ձեռքերս ջիբը դրած նստի ու տեհնինք թէ ո՞վ է տարւում. մենք պաի, կօտէ, տանողի կուրը կանգնինք, կօտէ, չունքի էգէբա սա տարաւ ու էն մէկէլին ինչի բեզամաղ անինք, կօտէ. չունքի, կօտէ, էն զլիխց մինչկիլ էս զլուխը, կօտէ, հայերս երեսպաշտ մարթիք ինք էլի, կօտէ. էտէնց էլ պտինք մնայ, կօտէ»:

Էս խօսքերը իրա սակութար խօսքիրն է, սա վուր մէ ուրիշը ասէր, ով գիգա քիթը պուտնզը արնալայ անէին միւր ջահել-ջուհիները, համա չունքի ասում է Լէօն—մարսում ին իրինք ու լաւ էլ անում ին:

Խօսքս զղբաշի հին շահի մասլահաթի վրէն է:

—Շահը վուր էլի թախտի վրայ նստի, հայերուն կանայ կոտորիլ տայ, կօտէ: Ի՞նչի է. գանա թաղտի վրայ նստիլը էտէնց գրութին ունէ՞:

Ախպէր, իս օրէնը երսուն ջեր թախտի վրայ համ նստում իմ, համ սուփրէն գցիլ իմ տալի. անուշ-անուշ հաց իմ ուտում, համ գիշերն էլ վրէն քընում իմ ու օրթում կուտիմ, վուր

Նաւահաթիկ համբուրողաց և անհամբեր նշանեցից—խօսեցից
Եւ բիւձի, չի կարելի զայսօր միս ուտել—նոյնպէս չի լինի և որ մինի համբուրել, զի պատէր կայ խիտա—զգիշերս Փէթիսայնօրա լինի և զշուխուսայն՝ որպէս շննջը թափեսցի ի վերայ սարին՝ Բաթանիցիլ:

14 (կիր.) Այսօր կիրակի է և օր խաղող օրհնութեան: Ի Ղարաթլիսա հաւաքեցին զամենայն նոյ խմատունս և ցոցիլամիտ կղերականս և անդ երգեսցէն ընդ հովատուն ծառոց և ի վերայ խոտոց զշարական ճարաւայ ժամիէր—Աստուծ կամենայ որ մեր գլիններում խելք բան չմնայ:

15 (ր. շ.) Տօն ամենայն սրբակիօն կուսիցօրիորդաց, որք միմիայն ի գաւիթս Խոջիվանից անդեռ նշանակին ընդ կարմրաթուշ պատանեաց և ի օրոշա—բուշա—ի ժամս և ի տարածամու զպատանի անին:

16 (ու. շ.) Ուտինք. զայսօր կարելի լիցի և զմիս է գձուլի դոշի կամ գուրգիլէլ ուտել, երեկոյեան պահուն հարկէ երգիլ «Ի ննջմանէդ արքայանոն գարթիք խելք իմ»... և այս, երբեք անգամ:

17 (դ. շ.) Յիշատակ տարեդարձի այցելութեան մերս մաքրակենցաղ գիւղատնտեսաց ի գիւղօրոյս, վասն քեֆ անելոյ և ի մասին մածոնի դասախօսութիւն կարդալու:

18 (ե. շ.) Ուտիք, զայս օր կարելի է ուտել և զաղբալին փող և զազգային գաթա. և ով ոչ ուտիցէ ի բերանի և ի մէջ զանդրատոյի զխօսցիլ դուս գայցէ:

19 (ու. ք.) Տօն ամենայն անմիտ գործչաց մերոց, որք անկան ի մէջ մեծ պատերազմի—որ ընդ դիմ բամուտ աղացաց էր և, որք վասն խաթրիման թեան ազգի՝ փորները կշտացուցին, ջրերը հաստորոցին և եղան իշի նահատակ ընկերոց իւրեանց:

Տոմարագէտ և օրացոյցագէտ
Աղբարիս աւր-վարդապետ.

ԲԱՅ ԵՆՄԱԿ

Գրասպար աղա Կարմիրը

(Սէյմահի)

բաղլին ջներին էլ չիմ կոտորում, չունքի ասում ին՝ վատ ժամանակ է, համ էլ փիս հոտ ունէ, ասում իմ, մէկէլ տեհնի՞ս էկան՝ արնոտ պատիրը ան թախար տեհան, իժում վուր պրատակօլ շինին, գուրձը սուղին տան—գիդիք թէ օյին կուլիլ՞:

Իս չիմ գիդում թէ Մահմէդ Ալու թախար էդ ինչ փիս խասըթի է էլի. էդ թաւուր թաղթը ի՞նչ կօնին:

էս կի չէ ու միը մամուլի բանը մնց պտի ըլի. հիմի ասում ին միթոմ մամուլը ցեխի մէջ է, կօսէ: Խիստ շատ ուշունցներ է տալի, կօսէ:

Ուշունցները իմանում իմ ու ցեխը կի չիմ տեհնում:

էս ցեխի վրէն էլ խօսում ին էս-թաւուր մարթիք, վուր առուտեհնից մինչկի իրիգուն քուչէքը շափ-չփում ին ու վուրդի տլապօ կայ մէջը վուտն էնդի ին լիվիը դնում, քիթնին խօթում:

—Իս քու դէգի սուգը, կօսէ, քու հօրն ու մօր կարկաժը, կօսէ, դուն ինչի իս ինձ ասում, վուր ես փիս մարթ իմ, կօսէ, ինչի իս ինձ ուշունցները տալի քու... էն... էն...

—Քու դէգի սուգն էլ, մամին էլ, տաաին էլ ու պապին էլ, իս քու մարթ ասողին, քիդ հէդ ման էկողին, քիդ մարթատիդ դնողին ու էն... էն... էն... էն... դուն սուսն իս էդթաւուր փիս-փիս ուշունցներ տալի, կօսէ—ամօթ չիս քաշում, վուր դայիմ դայիմ ուշունցներ իս տալի, կօսէ: Մէ թուղ քիթղ ու պոռնգդ արնալւայ անիմ, իս քու ասկ ու տակովը... իս քու...

—Տօ իս ի՞նչ իմ քիդ ուշունց տալի. իս քու մեռածն ու գեթեանին, ձիը տունն ու տիղը, ստոլն ու սկամէյկը, ձիը սուփրէն, դանակ շանգալը, ձիը ութոն ու քափկիրը, մաշէն ու փլալ-քամիչը, մինձ ու պատիկը, ինչ... ա-սիմ, էդ դուն ի՞նչ, վուր խուլիգնութին իս անսում ու հետտի ուշունցներ իս տալի, վուր ահանջս գուզիմ կողպէքով պինդ կանի, ինչ իս լեզուդ մըռտուում, սօ մուռտառ շուն շան... իս քու էն էն... ամօթ չիս քաշում, էս գագէթներում էդթաւուր խօսքիր իս գցում ու վիրչն էլ ասում իս՝ թէ գագէթները մոտոում ին, մաշ մաշ մինք ի՞նչ պէս է, վուր վունց ինչ չինք խօ-

սում ու վունչ էլ ուշունցներ ինք տալի. սովրի էլի մարիփաթը, ցեխ, ցեխի վուրթի, ցեխի ծնունդ: Ախպէր իս էստի էլի ցեխ չիմ տեհնում:

Մարթը վուր մարթուն ուշունց տայ ցէիս կուլի՞ էդ. Ֆիէ:

Չիմի մարթիքը իստակ վուր շարտա բաներ ին դառի:

Ցեխ էդ կի չի, ցէխը էն է, վուր մարթը մէ ցեխի մորէվում կաղնած ըլի ու դէս ու դէն ցեխ շարտի:

Չիմի իսկի Սատիսովը թողնում է վուր քաղքումը ցեխ ըլի. ու էն էլ էրեանսցկի մէյդնումը, վուրդի հայ գործիչները հաւաքում ին:

Ասէնք գագէթներում ուշունցներ ին տալի. դա ուրիշ բան է, դորթ է անգճի համա լաւ չէ, մագրամ ով է նա վուր հայ է, ու առանց ուշունցներ ի մինձցի:

Միը Լէօն վուր իստօրիէք ու պատմութիւններ գրելով է պարապում, ինչկի հիմի էդ բաներու վրէն վունչինչ չէ գրի:

էս համբերելու բան է:

Թէկի հայերու երեսպաշտութին ու «չէգոքութինը» գրել է, թէկի ասում է հայերը էն գլխեմէն էս գլուխը երկերեսանի ին էլի ու խանդիսխան էլ էլի համա փալան ին դառի, բա չպտի ասի թէ սակութար խասիաթն էլիլ, վուր մինք անգլուխ, անվուա, անխիք կու մնանք՝ համա առանց ուշունց տալու, Աստուր վունչ անէ, էդ թաւուր բանը. չենք կանայ մնայ, չունքի դա խասիաթի բան է:

Սասիաթի գորութիւնիցը ի՞նչէր է ըլում:

Մաշ: Խաթաբալա ամենայն հաւոց Գրասպար աղա Կարաուզով



Կարմիր օրերս սե՛ւ արիը դու,
Դայի,ինչպէ՞ս ծիծաղեմ ես,—
Վարդը ուրիշին ես տալիս,
Կուգես, որ փո՞ւշը քաղեմ ես...
Ախր այս խուլ քաղաքի մէջ
Ընսանիքով դուզաղ եմ ես,
Ի՞նչ օգուտ, թէ գրբանի՞ տակ
Դորսմ անէջ շրբաղ եմ ես...
Դիտեմ, այո՛ կընրկատես,
Որ գրբելում դանդաղ եմ ես:
Քաղցած փորով ես ո՞նց գրբեմ,
Քաչալ գրխիդ մատա՞ղ եմ ես...
Չէ՞ որ հացը—լուջ պահանջ է,
Բայց օրերով անսաղ եմ ես.
Դու ինձ հաց՞ տուր, ոսկէ-արծաթ
Յետոյ տես ի՞նչ դօշաղ եմ ես
Դու իմ կեանքը սպասովի՞ր ը),
Տես ի՞նչ խաղեր կըխաղամ ես...
Կուգես նախ քո քաչալ գանգը
Ոսկի թերթով վարաղեմ ես,
Յետոյ, ծեփեմ Հաջու դէմքը,
Թանձր մագուլթով սրաղեմ ես.
«Հորիգնի» խրմբազրողին,
Կուգես, ցեխում շաղաղեմ ես,
Իսկ Մատթէոս վարդապետի
Բերանը պիղ դափաղեմ ես,
էմանուէլ քայանայի ՞)
Անգուստ լեզուն դաղաղեմ ես,
Կամ էքս վարդապետ Մուրաղեանի ՞)
Արխին մի քիչ ծիւն մաղեմ ես:
Կուգես Միքէլ Լուկասեանի
Կաշին մի լա՛ւ դարաղեմ ես,
Կամ Նորա խենթ փաստաբանի—
Լեզուն կըտրեմ եւ աղեմ ես.
Կաշտակեր, լիք խրմբազրի—
Քիթը շամփրով լաւ դաղեմ ես:
Կուգես անխիզ «Ժէժ-թուրքերի»
Գլուխները մանգաղեմ ես,
Կամ դահնապետ Թաղիեի
Վերան շանթ ու հուր շաղեմ ես:
Օրմանեանի ոտխների
Դէմքը, կուգես, սե զաղեմ ես,
Կամ Կարապետ սրբազանի
Դէմ խօսողին—խոր թաղեմ ես: ՞)
Կուգես մեր նոր գրբակներին
Կամաց-կամաց թաղաղեմ ես,
Կամ Լէօ եւ ընկերութեան
Աղանք բարակ աղեմ ես:

1) Ի՞նչ է ասում, յօթին. հմի միը քաղքում հացը Կաւկասի կողմիցն է գալի. հաց է ուղնում վիկալնի ու ուտի էլի. իս խօս փոնչի չիմ:
2) Ուղում ա սարախի, վուր վերջը կրակ ընդնի ու պրէմիս ստանայ էն կիսքի համա: Գ. Կ.
3) Նորա «Կաթողիկոսական հարցի շուրջ» յօդւածի առթիւ (Մշակ) № 139):
4) Նորա «Իմ կարծիքը կաթողիկոսացուների մասին» յօդւածի առթիւ (Մշակ) № 139):
5) Տէրտէրութին էլ է իմացի ուզում է թաղի, արա մինք էլ ինչ պառուլի՞նք: Գ.ու. կալ.



Ծովային լողարաններում

—Տիկին, կարծեմ որ ձեր դէմքը ինչ ծանօթ է, արդ մի գուցէ ես տեսել եմ:


—Այո, կարծես թէ ինչ էլ ծանօթ է ձեր դէմքը. սպասեցէք—ասացէք խնդրեմ, դուք ո՞ր իմ առաջին օրինաւոր ամուսինը չէիք:



Մեր երեխաները

—Սիրելի աղջիկս, այդ ինչպիսի անկ զգեստ ես հագել. ո՞վ քեզ այդպէս տգեղացրեց:

—Մայրիկս ասում է, որ ինչ հայրս ստեղծեց այսպէս տգեղ:



Մտածումընների մէջ ընկղմած

—Անտէր մայ, կրկին անձրև է գալիս, իսկ հակառակի պէս ես էլ զօնտիկս չիմ վերցրել:



Երիտասարդը պատրաստ է

—Գէորգ, լսի՞ր մեր յարաբերութիւնները արդէն խօսակցութեան առիթ են տալիս—լու չէ եթէ պատկենս:

—Հոգիս, ես երբէք ամուսնութեան դէմ չեմ, բայց ո՞ւր հետ պատկենս:

Կուզես անմոռ Ղազարոսի
Մահն ողբում եւ աստղեմ ես,
Յետոյ Գեօգալ-Աղարաջուս
Պաշեմ ու պինդ ղուջաղեմ եմ—
Եւ այդպէս միշտ. գիշեր ցերեկ,
Պահեմ, քանի որ սաղ եմ ես...

Լ. Իլիպուօի

ԺՈՂՈՎՐԻՆՆԵՐԻ ԹՆՏՐՈՒՄ

Հինգշաբթի 11-ին օգոստոսի Զուբալովի
թատրոնում Հայոց Դրամատիքական ընկե-
րութեան թատերասէրների խումբը ներկա-
յացրեց Մարկ-Տվէնի «Ինչպէս դարձաւ նա
խմբագիր» և Ճագարելու «Բայդուշ» կոմի-
զիաները երկու-երկու գործողութեամբ:

Առաջին կոմեդիայի մէջ խմբագրի դերը
կատարում էր պ. Գ. Երեցեանը, որը,
պէտք է ասել, այնքան յաջողութեամբ ունե-
ցաւ ընմի վրայ, որքան յաջողութեամբ ու-
նեցաւ կեանքի մէջ «Կայծեր»-ի խմբագիր
եղած ժամանակ:

Ինչ աչնպէս թւաց, թէ խմբագրական
ծառայ Բօնի դերը կատարում է հուսերը
գլխից հաւաքած կապոնացի տղայ, բայց
յետոյ իմացայ, որ դա օր. ժամայինն է
տղամարդու շալվար հագած:

Պ. Փիրումեանը ժամանակաւոր խմբա-
գրի դերը լաւ տարաւ, եթէ նա մի բոխկի
պատճառով պ. Գ. Երեցեանի շաբաթաթեր-
թի փակման պատճառ դարձաւ, երևակա-
յում եմ, եթէ բոխկից անցնէր ձեռքը ձեռ-
քով:

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

— ՊԱՐՈՎԱԿԻՐ ԲԱՔՈՒԱՆ —

Իմ ազիզ-խաղափ արագերացու և խո-
թաբախտաների դեատարաշի Բնասպար
Կարասուզովեանցիք— մին դամակէ շաղ
շատ պարով շամախեցի դու տիկին Կեօ-
գալ Աղարաջիան:

Քնասպար ջան!

Այն օրը «Պաթարալա» սուրփ կուսակ-
ցութեան սուտ պաշտօնական «Պաթարալա»
մէջին կարգացի քի, ինձանա հարցնում ես
քի «Ինչպէս ա Հաջի-Ձէյնալ-Աբդին գօս-
պօղին թաղիկի քէֆը...»

Շատ էյհամով ես խօսում հա... Ազանամ
տիւ դիւզ մարթ ես հինչի ասքան տարի-
ները թաղիկի քէֆը չէս հարցուրալ հէանց
ասօր ես հարցնում...

Ես շամախեցի ամ, ինքսալ լեաւ էյհամ
հասկացող, ինքս ալ քոյնա ջայիլութիւն
արած կնիք, հէանց քի տղամարթիգերքը
պեարանները պեացրմ ան, ես ալլուստի
կլխի ամ ընգնում:

Հէանց քի «Պաթարալա» № 29-ը կար-
թեցի, ալլուստի Շամախի շօրերս կեցեցի,
սարքեցի, լաջվերդի շարշուփ քիցեցի կը-
խիս, ոտերիս ալ անցկացրի դարանները
երգան սաղրի չուսուկերքս, դիւզ քինացի

բուկին, նա իր «Բաղբի բօխէքը» և պա-
ուա Եօվանէի հետ ունեցած նամակագրու-
թեան գործն էլ կիսամուրաղ կըթողնէր:
Թող մէկը միտին օրինակ լինի:

Միւս գերակատարներն էլ լաւ էին ի-
րանց դերերում:

«Բայդուշ»-ի մէջ պ. Փիրումեանը Փուք-
սաւատեանի դերում բարաթին փութեր էր
փչում, պ. Գալուստեանը Նահատակեանի
դերում թամամ նահատակեց, իսկ պ. ե-
րեք աստղը Դարդակունու դերում լիքը
սկսեց և դադարկ վերջացրեց:

Օր. ժամայինը լաւ Մանիչկա էր, նա բե-
մի վրայ ցոյց տւեց թէ սիրելու և սիրե-
լու մէջ ինչ մեծ շնորք և ընդունակութիւն
ունի: Օր, Թարխանեանը ժամայինից յետ
չմնաց:

Փարեմուզ



ՆՁՐԻ «ՆԷՏՆԻՄ»-ՆԵՐՈՑ

Անցեալ գիշեր այրում էի
Քո ինձ գրած հին թղթեր,—
ու կրթօքիս տակ լսում էի
Խրդի բողոք ու խայթեր...

Այրում էի ես մի աճիւն
Նրիտասարդ զգացմունքի...
Չանգի տրխուր, մեղձ ղօղանջիւն...
Թափաղ շիթեր արցունքի...

Հաջիի տունը:

Մտա նես. լեազգի գեղան ասեց.

— Արվադ, հարա գեղիրսաթ, քիմի ստիր-
սան.

— Հաջինի գէօրաջաղ ամ,— ասեցի ես,
իշխմ վար:

— Մեան քիմ սան, աղուն նաղի:

— Աղբմ Գէօգալ դի, հաջի մեանըմ բալ-
դըզմն օղլի դի (տալօշս որդին):

Լեազգին քի տեսաւ հաջիի աղգականն
ամ, պեաց թողեց: Ես պեացրացա տիվերի
ատաժը: Մտա մեծ գալը: Չալ հինչ գալ...
հաւատա մեր Բաքուի Պարապետան մեծ
էր: Չալի մին դուարին կախ էր տւած
ոուսի թաքորի մեծ շիթիլը իրան կնգան
հետանն, ան մին դուարին՝ Ստամբուլի
Սօլթանի շիթիլը իրան քառասուն կնանի-
քոնց հետանն ծալապատիկ նստած: Իրե-
քինջի դուարին կոփած էր մին միւշտէյի-
դի և մին ալ Իրանի թեազա արախա շահի
շիթիլը, չորսինջի դուարին Իրան, հաջիի
շաքիլը Ստամբուլի կեարմուր Փեասը կը-
խին:

Թամաշեան նոր ի պրծալ, մին ալ տեսայ
հեարաթ նես մտաւ հաջին, կեցին երգան
արբուշիմի խայլաթ, դիդին ունգի, տա-
կան մին սիպտադ հալաւ, մին փոխաւ, ին-
քը ոտապեաց, կանանչ չիւստեր կեցած մին
սիպտակ արբուշիմի կեօտիք ալ խայլաթի
վերեան կապած, կլխին ոսկի թելելով ա-

Դարձան մոխիր թղթերը հին...
Տիրեց խաւար սենեակին...
Եւ ընդմիջտ քո թափերը...
Սեւ քաշեցի իմ՝ ղոգում...

Սիսն-Սախօի

Ժամանակակից նկարչի որդին

Ուսուցիչ.— Ասացէք մի քանի պարզ նախա-
դասութիւններ:

Աօակեր.— Մոզը կանաչ է. ծառը կարմիր է,
օղը սև է, արեւ սպիտակ է, լուսինը դեղին է, Աստ-
ղերը վարդագոյն են:

Ուսուցիչ.— Ինչի՞ էք դուս տալիս, որտե՞ղ էք
տեսել այդ ամենը...

Աօակեր.— Հօրս նկարների վրայ:

Չմտածած պատասխան

Լալկէլ.— Աղա, տանը սպիրտ չկար, որ մաշինի
մէջ ածէի, ճարհատեալ ածեցի ձեր կօնեակից:

Աղա.— Այ, յիմար, շատ իօ չես ածել...

Լալկէլ.— Չէ, Աստուած վկայ, հէնց մի կու՞մ
խմեցի:

Լ. Իլիպուօի



բած մին լեաւ արաղչին:

Մօտացաւ ինձ ասիլով.

— Սալամ ալէյքիմ, բաջի:

— Հաջի, բաշուա դեօնըմ, կուրբան օլում
սեանա, Սալամուվի գեարի գէօթի մեան
խաչփեարազ ամ...

Հաջին քի աս խօսքերս լիսեց, ունգը
փոխեց, իրեսը շուս տւաւ դիբի դիբիլա,
իրեք չին ասեց. «Աստաֆուրուլլա», «Աս-
տաֆուրուլլա», «Աստաֆուրուլլա»:

Չիւնքի ես և հաջին թուրքերան խօսե-
ցինք, չիւնքի «Պաթարալիտաները» թուր-
քերան չան իմանըմ, չիւնքի խաթարալիստ-
ները շատերը հայեր ան, ես մեր խօսակ-
ցութիւնը հայերան ամ կիրիմ, թարքմա-
նըմ, որ չիմ կարթացողները կլխի ընգնան:

— Հինչի՞ ա բու շօրերի՞ թուրքի սաեաղ,
կլօսթ խինա տիրած, ախի խաչփեարազ-
ներ աթանց խեսախաթ չուանն:

— Ես շամախեցի խաչփարազեամ, ինքս ալ
հայ-քրիստոնեա-լուսաւորչական: Մէք հա-
յերս, հաջի, մէյմուէի խեսախաթ ունանք:
Տէս, լափ սիֆթան, վերկալ թիֆլիզը, հա-
յերը գիւրջի շօր ան կեցըմ, կնանիքը
գիւրջի սաեաղ քաղքի-կլտի ան կապըմ,
բիրչագալթի թողնում, Դարարաղի հայերը
սիւնի-թուրքի սաեաղ ան կեցըմ, կնա-
նիքը երգան լեազգի կնանիքոնց՝ կեար-
մուր շօր ան կեցըմ. նուխեցի կնանիքը
Չաքաթալի շօր ան կեցըմ քէօյնա ջուհուր-

Ե Ր Գ

(Նւէր մեր КОКЕТКА-СОБОЛИК-ներին)

Ռեկտ վեր
նս գցել
Աչքերը
Վար գցել,

Երեւի,
Այ ախշի,
Սիրտ չունես
Դու պաշի,

Երեսը
Հաստամազ
Ծերկեղ ես
Հազի հազ,—
Սիրտ չունես,
Միտ չունես,
Այ ախշի,
Դու պաշի:

Երեւի,
Այ ախշի
Սիրտ չունես
Դու պաշի,

Սիրտ չունես,
Միտ չունես,
Այ ախշի,
Դու պաշի:

Շրթունքներդ
Հազ ու նազ
Ծոնել ես
Սիրանազ,—

Երեւի
Այ ախշի,
Սիրտ չունես
Դու պաշի,

Ով աններկ
Քեզ պաշի,
Կըթողնի
Կըփախշի...
Սիրտ չունես
Միտ չունես
Այ ախշի
Դու պաշի:

Երեւի,
Այ ախշի,
Սիրտ չունես
Դու պաշի,

Սիրտ չունես
Դու պաշի,
Որ... թողնի
Կըփախշի:
Ա.Բ.Բ.



ԱՆՅԱՉՈՂ ՈՐՍ

Աղջիկ.—Հազիւ եկար. իսկ ես այսքան
Շատ եմ քեզի ըստասել.
Մըթնում, մենակ, որբի նըման,
Այս եմ քաշել, տրտասել...

Բայց դու մթթէ բարկանում ես,
Որ քեզ մի օր մերժել եմ,

ների սահող մին վեադրա ալ կլիներին
տինիմ. շամախեցիներս ալ շիա-ղզրաշ
թուրքերի սահող անք կեցելմ: Շամախեցին
կլինի ա խինս տինիմ թուրքի պէս, զա-
բարաղցին թուրքի կնքահայր է պահում,
նուխեցին քառասուն տարի թուրքացած
մնաց: Ուղորթ ա, հաջի, հիմի մին քիչ
լուսաւորուլ անք, հայերը եւաշ հաւաշ
թուրքերան հեռանըմ ան, համմա շատ խա-
սեաթներ ան փոխում, մաղուլ առաջ մեա-
նազ թուրքի սահող հայեր ինք, համմա
հիմիք համ թուրքի սահող անք, համ սու-
սի սահող, համ ջուհուղ սահող, համ ֆուան-
գի սահող, համ ինգլիզի սահող, համ ալ
չոթ զնախշ հինչ չոթ ու ցաւի սահող, մին
խօսքով հիմիգալ հայութիւնը լափ շնար-
շամբա թոխումի ա...

—Խինան լեաւ պիան ա, ասեց հաջին,
տեանըմ ես, ես համ կլխիս ամ տինիմ, համ
մուրիքիս համ ալ բեղիս...

—Շատ լեաւ պան ա,—խօսքը կտրելով
ասեցի ես,—լեաւ դեարման ա, տեանըմ ես,
երիշը կորցրած ծիլի, էշի փաշաների արան-
քին ալ ան տինիմ, որ շատ չքրտնի քի քշի-
լիս:

Հաջին շատ փեարթ իլաւ, ես հագկացայ
քի խօսքերս առանց չափիլի ասեցի, համ-
մա երկուսներս ալ սուս արինք:

Հաջին մին պապոս քաշեց, ետով միտեզ
ուաւ երեսիս, հարցուրեց:

—Բաջի, քանի տարական ես:

—Չորս քսան տասնը մին:

—Ուրեմն ինձանա տասնը հինգ տարի
մեծ ես:

—Չամ մտնըմ, բազանամ տի քանի
տարեկան ես:

—Բամազան ամսին օխտանասուն վեցը
թամամըմ ա:

—Հաջին ալի ֆիքիլի քինաց. հինգ նը-
մութ սուս արաւ. ետով դիւզ կաննեց առա-
չիս և ասեց:

—Բաջի, հինչ դուլուղ ունէս:

—Հաջի, ես խաթարալիստ ամ, «Սաթա-
բալա» կուսակցութեան դրօշակի տակ նըս-
տող կնանիքոնց օպեկուշան ամ: Ինձ օֆի-
ցեալնի էյհամով հրամայած ա, որ ես քե-
զանա մին խեարար կիրամ, չիւնքի, հինչ-
պէս ասըմ ան, տիւ սքաւոր ես:

—Ես սքաւոր չամ, փառք Ալլահին, ես
ոչ մի ննջեցիալ-օյլի չունամ, սաղ սալա-
մաթ անք:

—Հաջի, մարթ կայ ջանով ա մեռնըմ,
մարթ կայ խեասիաթով, մարթ կայ հո-
քիով, մարթ կայ առանց հոքիի:

Հաջին ֆիքիլի քինաց. մատը տիրաւ ճա-
կատին, խէյուգ սուս արաւ, ետով ասեց:

—Ծեր մեծ կոմիտէտը հմի ա:

—Քեասպար-աղա - բէազ Կալատուզով-
եանցը:

—Հմյ ա, եօխանամ դաշնակցութուն:

—Չամ իմանըմ,—ասեցի ես:

—Սօցիալիստ մ, եօխանամ հնչակեան-
թուն:

—Չամ իմանըմ, աթանց պեաներան իմ

Չէ որ—թաքուն, խանութի կա-
Քեզ միշտ, ամենչա սիրելի եմ.
Տոն—ՄԱՐՏՅԱՆ

Տղայ.—Ո՛չ, ո՛չ, հրբէք ես չեմ յիշում՝
ի՞նչ է եղել, ի՞նչ անցել.
Այդ օրը ես հէջ չեմ յիշում,
Քեզնից հէջ չեմ նեղացել...

Այժմ էլ գիտեմ, որ դու ի՞նչ ես,
Ու միշտ ի՞նչ էլ կըմընաս.
Ես էլ թաքուն կըսիրեմ քեզ,
Բայց... ուրիշ բան չիմանաս...
Ախունդկարեան



կլօխս տիւս չի կեամ: Ես ճանաչըմ ամ իւս-
թարալաթուն.—Չեանջալ, դալմաղալ, կոէվ,
թագիլ-թագիլ, պոմբոսանք, սատանութուն,
խեարարբեղանթուն և սուս-ուզորթ ասիլ.
—Գա մեր կուսակցութեան բայդապի վերայ
կիրած խօսքերն ա: Աթանց պեաներ իլի-
լիս, ես հեազիւր ամ:
—Անըմթ հի՞նչ ա.
—Գէօզալ Աղաբաջի:
—Գէօզալ Աղաբաջի, մտքթ սոսա, «Սա-
թարալիան» խեր խեարար չի իլիլ, ասա
հի՞նչ ես ուզում, Ֆեանդ-Ֆիւնդ ունէս,
ասա...

—Հաջի, դիւզը ասած, ես իկալ ամ, ինձ
հետի սօյրաթ անես տեսնամ քու և քու
ուզրաւլիաշիւզ Բէյբութովի մէջին հի՞նչ
դալմաղալ ա պատահալ:

—«Շունը կընտաի իրան թեաթիզը կը-
ծամի...»—ասեց հաջին մի ստաքան շեար-
բաթ խմելով, մին ստաքան ալ ինձ թուս-
գա արաւ, ես ալ խմեցի:

—Հա, Գէօզալ ջան, նա ի ասըմ, իմա-
նըմ ես, մեասալան ասըմ ա. «քեաշալ ա-
պանամ եարալ դի, էօզ բաշի գարար քի...»
(քաշալը եթէ ընդունակ է, իրա պուլսը
թող քորի):

—Հա, նա ի ասըմ, Գէօզալ ջան, ազա-
նամ հայերն խաթարալիստ ան, ազանամ
նրանց կազէթը իմ և Բէյբութով ինձնա-
րիս դալմաղալով ա ուզում օր անցկացնան,
լեաւը նա ա քի, առաչ-առաչ մտնան
հայ միլիոնչիգների տունը, նրանց ուզրալ-

Հ Տ Պ Ի Տ

— օրգանակ —
ԵՒ ՉԲՕՍԱԼԻ
ԾԱՂԱՐԱՆՔԵՐԹՈՒԿ

№ 2

ՎԵՐՋԻՆ

— Միթե դարձեալ շոգերը չեն մեղաւոր —
երբ մի օրաթերթ՝ հայ գրողներին՝ 40 ան-
մահներին օրգանը իր բազարում, այսինքն
չորրորդ երեսում, այսպիսի ցինիկ ազգեր է
սեղաւորում —

Չափ ընկած վազեց,
Հասաւ, խմբագրի
Գուանը կանգնեց,
Ու որ չզըռաց —
Երկինքը գոռաց.



«Новая книга исключительно
для взрослых».

«Приключения игуменьи»
Картины разврата и полового
извращения...

Չէ. լաւ է, ոչինչ. հանաքը դէնը մնայ
այնքան էլ չի կարելի սրբացնել գիրը — որ
կոչւած է մասամբ առաջնորդելու մեզ դէ-
պի անբարոյականութեան կատարելութիւ-
նը: Գիրը միաժամանակ պիտի ըստիւզանի
ազգատախտակ լինի... և այդ փողի համար.
փողին ամեն ինչ կարելի է զոհել... հարկ
չկայ մեղադրելու վաճառքի կանանց...

E' bien! պահճա՛ Գուտենմբերգ.
Բայց չէ. շոգերն են մեղաւոր.
Ծիծաղիր հապիտ:

ԱՆՏԵՐ ԷՅԻ ՆՕՏԱՆ

(Առ դասն խմբագրից նայոց մերոց)

Մի անտէր սև էջ
Սարերից իջած,
Գուցէ մարդոց գէշ
Քեթիակից փախած,
Ուղած ու պլլած,

Տանջուում էր էջը,
Մաշուում էր լեշը,
Բայց տէրը նրան
Ոչ կեր էր տալիս,
Ոչ մօտ էր գալիս...
Դրած առաջին —
Միրգ ու կանաչին,
Միշտ քէֆ էր անում
Հովում ճաշելով,
Չիրուխ քաշելով...

Խմբագիրն զթաց
Հալածուած էջին
Ու լուռ զննելով
Հագին ու կաշին,
Բարձեց չոր մէջքին
Կըծերն անագին
Եւ սկսաւ մօտ
Գեախից ի հարկին
Պաղ ջրեր կրել
Ու թերթը ջրել:

էջը տեսաւ որ —
Սատկում է քաղցած,
Գրիչը այնպէս
Զիւ ձէնով զըռաց
Որ մեր խմբագրի
Միտը թրթըռաց.

Ա.Ռ.Ա.ՋԵՆՈՐԴՈՂ.

Անտանելի շոգեր են.
Այսպիսի օրերին ֆէլիէտօնիստի խելքը
զգալի կերպով նւագում է և նա չի իմա-
նում թէ ինչ գրի, որ չտոնահարելով հան-
հանդերձ նուրբ երգիծանքի բարձրագոյն
նշանակութիւնը, միևնոյն ժամանակ զը-
սալի բան տայ ընթերցողներին:

Եւ միայն ֆէլիէտօնիստի խելքին չեն ազ-
դում յուլիս — օգոստոսեան շոգերը...

Միթե շոգերը չեն մեղաւոր, երբ «Հորի-
զոն»-ի ասելով Մոսկուացի Միւրգաշիւր,
իբր ասել է թէ հարկաւոր է հայ-
րապետական աթոռը Պետերբուրգ փոխա-
դրել իսկ Միւրգաշիւրն էլ «Հոլիտ»-ում գրել
է թէ՛ որ այդ բանը Մեսրոպը եպիսկոպոսն
է ասել...:

Է՛ որքամ զքեզ էջմիածնի աթոռ...

Թէ ո՞վ է այդ յիմար լուրի առաջին տա-
րածողը, ես այդ չգիտեմ — միայն թէ հար-
կաւոր է այդ երկուսից — մէկի՛ միւրըքը
պոկել. միւսի՛ շինքը. կամ հէնց ուղղակի
երկուսի ...: էլ կտրել:

Լեռնայի գնդերի սոյբաթը իմանան...

— Հաջի, ես խնթրում ամ, առաջ քու սոյ-
բաթը անէս, պրծնէս, կտո՞վ, ազանամ ու-
ղում ես, ես քու զուլութ ամ, հայերան,
ռուսներան, շուհուղներան ալ սոյբաթ արա,
համմա առաջ-առաջ տիւ պատմի քի, հի՛նչ
պէս թագիլ տիր Բէյբուլթովին և հի՛նչպէս
ա իլալ սիֆտաղան:

— Դէ, Գէօղալ Աղաբաշի, լսիր, անգոյ-
ներթ լիւս պեացի, ես ասամ, տիւ կիրի.
ես քեզ քիւրճնչս պէս հաւատում ամ:

— Ասա, ասա, դուրբան իլամ քեզ հետի:

— Աս Բէյբուլթովը տասըվեց տարի առաջ
եկաւ ինձ մօտ. կլօխ տալով սալամ տոււ,
կէցին մի քէօյնա շօօլիս սուրբաշի կար,
ոտին մին ճղւած չեաքմա, կլխին մին ուն-
զը կտրած շապկայ: Նա ինձ ասեց, որ
ինքը Ղարաբաղի ֆեաննա խանի ազգան
ա, ոռուք նրանց իլամ-չիլածը խեազնին ա
աւայ, ինքը հինչպէս խանի ազգ, ուղում ա
ուսում առնի, իրան պապերի խանութունը
ցէք պերի: համմա ուսումի փող չունի, ե-
թիւմ ա: Ես տեսայ որ՝ տա լեւ թուրքի ա
նման, մտկումս ասեցի տա լեւ պրոպա-
կանգիստ կիլի թուրքութունը քարուղիլի
և ամիսը վաթսուուն մանէթ տել, որ քինա
Փետրուրքում ինձնարութուն սովրի, ե-
ղով կիւ քօմը շինի: Աս ախմախը քինաց,
ուսումը ստաւ, եկաւ Բագու, ես դրան ա-
միսը երկու հարուր մանէթ գոնլուղ տելի,
որ իմ կործերիս միտիդ անի: Ես...

— Հաջի, ինձ հետնան կարճ խօսի, ես
խօսք ամ հարցնում, ասա տեսնամ հինչի՛
թագիլ տիր Բէյբուլթովին...

— Սեան օլասան, Գէօղալ բաշի, ես ալ
չամ իմանում հի՛նչպէս իլալ, ջիւնքի ջուա-
բաշուա ան խօսում, օրը մին պարովա-
կիր ի ստանում փոշոյից «սօփուսունի ուրուկ

կաղժի»: Պարովակիրը պացիմ, կարթիլ չի
իմանում, տամի Բէյբուլթով շան որթիին
քի տա հի՛նչ ա ասում. ան քէօփօղլին ալ
կարթիլան ետով ասում էր քի դարօլինները
մինը մինին պանբասում ան, խեաբարբի-
զանթուն ան անում, կտո՞վ ալ պարովակիրը
ճղուում էր տեան քիցիմ ասելով քի «դիւզ
մարթը առանց անումի, բէզ փոթիլիս պիս-
մօ չի կիրիլ... Ես ալ հաւատում ի Տիւ մի
ասիլ, աս պարովակիրըքը ճեօկ պեաներ
ան, դրանց մէջին Բէյբուլթով հարամգաղի
խեասիաթներն ան կիրալ ես բէյբուլթով:

«Անցկացաւ մին քանի ամիս, մին օր
տեսայ կնիգս աշկերան արթասունքը գիւ-
զիլա թափիլով մտաւ օթաղս: Ես չաշմիշ
իլա, ասեցի քէօփօյեօղլի զանլուղ հինչի՛
ես լեաց իլիմ, բեագանամ քիզ տիւզնը —
ճարաւ ամ պահում. բեագանամ տիւ բեա-
սիբ, անտէր մարթի կնիգ ես քի, լեաց ես
իլիմ: Ասա, ասա տեսնամ սրտըթ հի՛նչ ա
ուղում, ցաւըթ գեարդըթ հի՛նչ ա, Փոսան-
գրատանը, Մտամբուլը, Թէյբան-Թեաբիզը,
Մօսքով-Փետրիւրքը քիզ դուրբան կանամ...»

— Հաջի, — ասեց կնիգս նախշուն աչքերը
թեամիզիլով, — «նէյնիւրամ դըլ թէշտի քի,
իչինդա կան կուսաշաղ ամ...» (հի՛նչ ամ
անում ոսկի ամանը, որ մէջին արիւն ամ
թիլքիլիլ): Ես իլամ թուրքերի, շիա-սիւն-
նիների հաջիլ կնիզը, համմա ասօր ինձ
մին լալօտ ինժուար, մին Բէյբուլթով, իմ
նշանածիս զուլուղին, իմ գէգաս ինձ աշ-
կով-ուշքով անի, ինձ ուզանա թօլլամիշ
անի, իմ քեարինս մոտառիլ ուղի... բեա-
գանամ ես աննամուս ամ, բեագանամ ես
բեագանամ տիւ մեռալ ես...» Կնիգս ալի լեաց
իլա արուրջիլի եայլուիլը աչքերին փոնած
ընգաւ դուշագս:

«Դիւզը ասած, Գէօղալ բաշի, ես չաշմիշ
իլա, առնունս տուա կլխիս մօտացայ տէ-
լիֆօնին, զանիտ արի, ուղեցի զոսղանա-
չառնիգին, բարիշնան տուաւ. բաշտամիշ ի-
լա տէլիֆօնով խօսիլ, ասացի.

— Էթօ կօնցիլամ, գօսպօղլին տամ.
— Օթքուլաւայ.
— Էթօ քուրթիլա Թաղիկ-գեներալ-հաջի
Չէյնալ-Աբիւլ Թաղիկ գօւարիտ. փրաշու
դուացթ չթիլը չասա օթփրաւիթ մօյ դին-
սիզ ուփրաւիաշիզ Բէյբուլթովա սաֆսէմ
կանեց Սիբիլ-Մախալին...

Գէօղալիմ սեսա գալիր:
— Հաջի, սեան սան, բիրազ օզիւի սախ-
լա, օֆսալա էլա:

— Քիմ դի դանըշան:
— Հաջի, օֆսալա էլա, բու սահաթ-
թա գեալիր ամ:

«Հա, Գէօղալ ջան, մին ալ տեսա Փայ-
տօնը կաննեց տունի առաջին, ըզանօկը
տելին, նէս մտաւ մին աշնա մարթ: Մէք
շատ խօսեցինք մասլահաթ, արինք. կտո՞վ
մի ճոկ աշնա ալ կանչեցինք, նա ալ եկաւ.
Թեագագան մասլահաթ. կտո՞վ ալի աշնա-
գօստ կանչեցինք, եկան հաւաքեցին: Տը-
լանց թափեցի մին տուն, կօնիակ, շամ-
փանսկի, գաթուսկիներ թափեցի առաջնե-
րը: Ես տիւս եկայ, խեարար խրկեցի Բէյ-
բուլթովին, որ կեա մօտս:
Կէս սահաթան կտո՞վ Բէյբուլթովը մտաւ
նես, ինձ հետնան ցէք տուա:

(Ալի կիլի)
Գէօղալ Աղաբաշի

Միտքը հասկացաւ,
Սակայն սուտ կացաւ,
Բեխերը սրեց
Ու բան չխօսեց:

էջը խիստ սիրող—
Աղբիւրն ու այգին
Ու փոքրուց սովոր
Դառն աշխատանքին
Ու կուշտ տէրերի
Անխիղճ արարքին...
Գործադուլ չարաւ.
Բայց սոված-ծարաւ
Այդ գիշերը ողջ
Քունը չտարաւ.

Եւ լոյսը բացւած
Խեղճը բերաւ ինձ
Իւր նօտան կագած
Մի-միակ կէտից,
Որում շեշտում էր—
«Աղան, կեր տուր ինձ»
Խնդրեց տպել այն
«Հտպիտ»-ի ծոցում,
Ու Գասպար-աղան
Տայ մի գեկուցում:
(?)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եքս-Շահը լսելով որ իր գլուխը գնահատուած է, անմիջապէս պահ տուեց այն Սեփեհարին, խնդրելով թողնել տիրավաճառութեամբ իր հին մանիան և այս անգամ պահել որպէս սրբութիւն:

Աբգիւլ-Համիլը վերջերս լսելով իր թանկարժէք իրերի վաճառման և Եքս-Շահի վերադարձի մասին, ուղում էր սատկել, բայց յետոյ տեսնելով իր եղբայր՝ Սուլթան Ռաշիդից նէր ուղարկուած հինգ նոր գեղեցկուհիներին — փոշմանեց՝ ներկայումս ողջ է. քէֆն էլ խօշ... սակայն յամառ լուրերն են պտտում, թէ իւր գլուխը տել է հարբեցողութեան:

Փայլուն Ռէյնբօտի Պետերբուրգի բօժոնդի դարդ Վօնիարսկու, Ֆրանսիական թագաւորների շառաւիղ՝ Դէ-Լասսիի և այլ կաշառակեր ինտենդանտների դատական

պրօցեսսը վերջացաւ: Մատակարար Ֆիրմաները հաւասարապէս և տիրուր են, և ուրախ...
Այսպէս է միշտ. գաղտնիքները վաղ թէ ուշ լուծուում են:

Թող զգուշանան մեր վերապատելի վանական մկնիկը:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Թիֆլիս.— «Ե. Մ.»-ն յայտնում է, որ մարդ քանի խելօքանում է, այնքան գլխի գանգոսկրը բարակում է և վերջապէս դառնում է ձի կեղևի պէս նուրբ ու փխրուն: Վտանգը լուրջ է, հարկաւոր է զգուշանալ:

Դիլիջան.— Արաքսեանը եկաւ մեզ էլ զարմացրեց իր շիրաջխանական տափակ կուպրետներով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գիւղական վաշխառուները մի կօլլեկտիւ բողոքագիր են ներկայացրել Բագրի Հայոց Կուլտուրական Միութեանը, որով խնդրում են մինչ Կովկասում զեմսաւօյի հաստատելը, չկազմակերպել գիւղերում էժան վարկի ընկերութիւններ: Հակառակ դէպքում սպառնում են վրէժխնդիր լինել դադանի ճօհօս-ներով:

Դաշնակցութիւնը veto է յայտարարում Օրմանեանի կաթողիկոսութեան դէմ, իսկ «Հովիտը» դաշնակցութեան դէմ... «Հտպիտ»-ն էլ veto է դնում կօնսիստօրիայի Պէտոի դէմ:

Սպանդարի օգտին հաւաքուած գումարը աւելացել է ևս 2 բուրլիով. դարձել 23 ր. Պա պա պա պա...
Այդքան փողը թնց պիտի ուտի Փարիզում:

Ելմիածնից «Հովիտ»-ին գրում են.— «Կատարեալ մեղքութիւն է տիրում. միաբանների մեծ մասը բացակայ է, ուսանք ամառանոց և ուսանք էլ հանքային ջրերն են դնացել.»

Շատ լաւ են արել, չուզողի աչքն էլ են հանել. ևս էլ ու պարապ լինիմ ու սնտէր

* * *

Նազու խանըմ, շատ ես լալիս,
Խըղճում եմ քեզ, հախ Ասուած.
Փողդ էլ դուրըս շատ է գալիս,
Բայդ դեռ խելքըս չեմ ցընդած:

Մի հինգ տարի առաջ պայր՝
Ասուած վրկայ՝ կառնէի.
Օրէն թող տաս բամբ էլ տայիր՝
— Զան, լաւ, մէկն էլ,— կասէի:

Բայց թէ հիմի... ուշացել ես.
Ափսոսում եմ, հախ Ասուած,
Փողդ՝ դուրըս շատ է գալիս,
Բայց դու... շատ ես պառաւած...
Ախունդկարեան

Ի ՍԷՐ ԱԼԼԵՀԻ...

(Բարեգործներին)


Ինքս կօնեակի փող չունեմ բնու,
Աղջիկս մօղնի նեղ շրջադգեստ,
Իսկ որդիս ճԱՍԼԱՆ— օղաչու մի նաւ,
Ի սէր Ալլահի մեզ ողորմացէք:

Կինս կարգի մէջ սաստիկ տարւեցաւ,
Բանկից գրում են մուրհակ թափեցէք,
Աղջիկս սիրոյ պայթում ստացաւ,
Ի սէր Ալլահի մեզ ողորմացէք:

Բարեգործներին խնդրում եմ ճամբել
Հարիւր հազարներ, այս կարճ հասցէով,
Յատուակ փնդրում եմ օ՝ չուշացնել
«Պերկող» անել լոկ հեռագրով:

Խննթ

փողեր ունենամ, դեռ գուցէ Աւստրալիա էլ անցնեմ:



ՆԱՄԱԿ ԽՄԲՕԳՐՈՒԹԵԱՆ

Ջալալ-Օղլի. Ռ. Յ. Կ. Թ. Ք. Ե.

«Սուրհանդակ»-ում մի պարոն Դիւանքեցի, խօսելով տեղիս դպրոցի խառն վիճակի մասին, մի երկու ստոյգ տեղեկութիւնների հետ, քանակերկու սուտ մուտ է կցել և վերջն էլ շրջանիս ինտելիգենտ ու պարտաճանաչ գործակալին անւանել զանցառումանցառու և այլն:

Հոգիս վկայ, որ այդ գրողը, ինչպէս երևում է գրածի շնորհքից—Արգանուչի թութուհի ուսնա միբուքով մի պարոն պիտի լինի, միաժամանակ ВОДЕВИЛЬНЫЙ կօմիկ գաւառական բեմի վրայ: Հանդէս

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՅՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Մի խումբ պատուաւոր փուշ-կենդանիներ կրկնեկայացնեն



Տրադի—կօմեդիա անվերջ գործողութեամբ

Հեղինակութիւն—Երեսփոխանի թարգմանութիւն—Փամիկոջեանի Ռեժիսոր-Մովսէսյան:

Խմբագրութեան կողմից

Մեզանից անկախ պատճառներով, այսօրւանից «Հտպիտ»-ը դադարում է ծիծաղելուց և մեկնում է Եալաւ մեկանխօխայից բժշկելու համար: Ստացուած բաժանորդավճարները վերադարձնելու մասին ոչինչ ասել չենք կարող, որովհետեւ տրդէն վաղուց կերել պրծել ենք... Իսկ կերածը--կորած է:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՄԱՐԻԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Ի Ե Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ


Մասնագիտութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒԻ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր ծսփասնը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիգաւետեան փող. № 28. 000—144

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի Ս. ՉԻՐՔԵՉԵԱՆԻ

ՕՐՄԱՆԵԱՆԸ


ՉՐԳԱՐՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՅԵՐՈՒԹ ԴԻՅԵ Է 30 կող. Դիմել՝ «Հովիտ»-ի խմբագրութեան և գրավաճառներին: 00—24



—Յամենայն դէպս՝ ես կարծում էի թէ մեղրամիսը մի այլ բան է, այն ինչ՝ սա ոչինչ նոր բան չի ստում:

—Մի՛թէ, ուրեմն դու դժգոհ ես:

—Ոչ թէ դժգոհ, այլեւ պատրաստ եմ իսկոյն հեռանալ այստեղից—ախտս իմ կորցրած ժամանակ...



ՕԴԱԶՈՒ ԶԻԵՐԸ ՄՕՏԻԿ ԱՊԱԳԱՅՈՒՄ

ՎՈՐՄԵՑԻ Ի յունիսի 19—20-ին

ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ԲՐՈՇԻՐ

Մ Ա Բ Կ

ՆԱՄԱԿՆԵՐ ԸՌ ԼԻՆՆ

Գտնողին խնդրում են թողնել «Նամաքա-լա»-ի խմբագրատանը, զոհացուցիչ վար-ձատրութեամբ: 10—4



ՆՈՐՈՒԹԻՒՆ

Ժիվուպիսեց Մ. Յովհաննիսեան, որ Պետերբուրգից սկսած եղել է համա-րեա Ռուսաստանի բոլոր մեծ քաղաք-ներում և լաւ ծանօթ է վիվեսկաներ պատրաստելու գործին, այժմ Թիֆ-լիսի կենտրոնում բացել է արհեստա-նոց, ուր ընդունում է միմիայն

ՎԻՎԵՍԿԱՆԵՐ

ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՊԱՏԻԷՐՆԵՐ

(Специалисть вывѣсокъ)

Վիվեսկաները պատրաստում են շատ շքեղ, ամենավերջին ստիլով, անհա-մեմատ արժան, քան միւս բոլոր ար-հեստանոցներում և յանձնում է խոս-տացած ժամանակին: Բացի այդ, բո-լոր պատւիրողներին, իրենց պատւերի գնի համաձայն տրւում է մի սիրուն իւղաներկ նկար շքեղ շրջանակի մէջ իրրել պրէմիա:

Ցանկացողներին խնդրում եմ այցելել և համոզելը

Յարգանք՝ Մ. Յովհաննիսեան

Հասցէն՝ Михайловскій пр. № 74

00—22

JAUNUS PMS

Նորագոյն նկարներով հսկայական քանակով

ՍՏԱՅԻՆՆ Է

Ե. Յ. Ծ Ա Տ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի

Գ Է Պ Օ Յ Ո Ւ Մ

որտեղ և վաճառում է գործարանային գներով:

Թիֆլիս Դվորցովսկա փողոց:

50—24

АТР ПЕТЪ

1. Мамед-Али-Шах

Народное движение въ Персіи ЦѢНА 1 РУБ.

2. Рахим-Хан

Смуты въ Персіи ЦѢНА 20 КОП.

3. ИМАМАТЪ, государственный строй и религиозное воззрѣніе въ Персіи, цѣна 1 руб.

4. БАБИТЫ И БЕХАЙТЫ

Новое религиозное теченіе и ученіе въ Персіи цѣна 60 коп.

Во всѣхъ книжныхъ магазинахъ. 00—8

ТИФЛИССКОЕ

2-ое восьмиклассное Коммерческое училище

СЪ ПРАВАМИ

Объявляетъ, что переводныя испытанія будутъ произведены 26 и 27 августа и пріемныя 31 августа 1, 2 и 3 сентября. Въ младшія отдѣленія приготовительн. класса принимаются дѣти безъ экзамена. Канцелярія открыта ежедневно отъ 10 ч.—1 ч. дня. Панасевича ул. 8 уч. соб. д. № 38. 2—1

ԱՐՀԱՎՄԵԼԵԱՆՅԻ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԶԳԵՍՏՆԵՐԻ

ԱՐՀԵՍՏԱՆՈՅԸ

Վեյիամիրնովսկայա փողոցից ՏԵՂԱՓՈՆԵԿՑ Երևանեան հրատարակ, Խարազեանի տուն «Кавказъ» թերթի նախկին խմբագրատունը—Առաջին Փոխադ. Վարկի Ընկ. կից:

Արհեստակցում ընդունում են պատւերներ տղամարդկանց ամենաճաշակաւոր զգեստներ կարելու ուսուսական և արտասանմանն ասպանքներից:

Որոնք ստացւում են շարթէ-շարթթ՝ և անմիջապէս:

Գ Ն Ե Ր Ը Մ Ե Տ 2 Ե Լ Ի

20—4

40 օր! ՉՐԻ!

Եթէ դուք 40 օրուայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարգալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները ընկրամ են),

ՓՈՂԸ ՅՅՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

սոր ձեռնարկի գինը ճանապարհածախերով վերագիր վճարով արժէ 1 ր. 10 ց., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—Մ 2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.: Պատւէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար: С. Петербургъ, Петербургск. сторона Большая пр. № 56—609, Я. К. Петербъ. 482 00—14

Ի-ն Խ Ո Հ Ա Բ Ա Լ Ա Կ Ա Ն Կ Ո Ւ Ր Ս Ե Ր

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍ-ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ՃԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 բնական կերակուրների, խմիչքների, թխածքների, կօմպօտի, մուրաբանների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն: 300 երես խիտ տղազրած, գինը ճանապարհածախսով վերագիր վճարով 2ր 60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային համեղ ու սննդարար ճաշ, միսը կտտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելածով, մօտ 100 երես, նկարներով: Գինը 1 ա. 20 կ., երկու գիրքը միասին 3 ա. 35 կ. (կարելի է մարկաներով). պահանջներով գիմել բացառապէս Я. бургск. рсу, С.-Петербургъ, Петерб. К. Петесторона, Большой просп. № 56—609, 483 0—14 (Ե. Ն. շ.)

ԲՈԼՈՐՈՎԻՆ

!! ՉԸԿԱՆ ԱՅԼԵԻՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!

Եթէ դուք հիւանդ էք սֆիլիսով, արիպէրով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Զեր տուղջութիւնը քայքայած է. օնանահանութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան գաղտնի հիւանդութիւնների տղամարդու, կանանց միջատեղական օրգանների», նկարներով և բազմաթիւ բնական անհրաժեշտ 250 երես Գինը ճանապարհածախսով ու վերագիր վճարով 1 ր. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերագիր վճարով 1 ր. 40 կոպ.: Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով): Միակ պահեստը С.-Петербургъ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К. Петербъ 484 (Ե. Ն. շ.) 0—14

Ր Է Ս Տ Ո Ր Ա Ն - Ճ Ա Շ Ա Ր Ա Ն
„ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՅՏ ԹԱՐՍ ՄԹԵՐՔԻՅ

— Եւրոպական և ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Հետիր ըմպելիներ, զով կարենտ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառայներ

25—15

== Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է ==

Ն Ա Բ-Գ Ո Ս

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

Գին 66 է. 75 կոպէկ

Դիլատոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և գիմում են զուամարով գնողները:

XX



Первокл. ресторакъ „АННОНА“



„Здание Артисстического Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час.

до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць—г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.


ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билларды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“

52—16

XX

ՐՕՏԷՐԷ.
ՅԵՐԱՅԵՅԱՆ
ՆՈՅՆՈՐՈՒՅՅ



ՄԱՀՄԻՒ ԱՆԻ ՇԱՀԻ ՎԵՐԱԴԱՐՉԸ